

ԲԱՏԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիտիկոյ համար
Տարեկան 10 Պր.
Վեցամսեայ 5 »
Առաստան հսկի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻՆՆԻ ՎՃԱՐՆԵՐ
—)(—
Գրութիւնք և չլին ջրուր
—)(—
Իրանացիական շոյր 20 սակ-
քիս և ևրիսիս ան ի սկ-
զանկերու համար 20 Օլօ
գեղ կըլլայ :

ՇԱՐՇՈՒՄ

Նամակ և զրաւ գրկեղ
և Տրագրուրեան հասցիին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукьясовъ.

ՅԱՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ

—)(—

Բոլորովին անսպասելի կերպով աշխարհիս ամենազօրեղ պետութիւններէ մէկի միահեծան տէրը, Ռուսական թարը, մեծ տէրութիւններին առաջարկուած գեներալ վաչր ղենչև և ևրիսիս ժողովրդներ խաղաղ զարգացման գործին :

Կատարեալ հրաշք : Այդ առաջարկը անուս է այն երկրի ինքնակալ տէրը, որը այս հարիւր տարվայ մէջ շարունակ պատերազմել է, նաեւ աշխարհի մի խոշոր մասը և նրանում ապ ոչ բազմալեզու, բազմալեզու և բոլորովին տարբեր յատկութիւններով, տարբեր յատկութիւններով, տարբեր յատկութիւններով և ձեռքտուած ունեցող տարբեր բունի իրար սեղմել ու մի ընդարձակ պետութիւն ստեղծել :

Ինչ հրաշալի բան . զէնքը վաչր ղենչև, հարեւան զօրաւոր ազգից վախ չունենալ և ամբողջովին ներկայ հարազատ ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացման, ամէն ճիգ թափել ազգատ, խաւարի մէջ ընկղմված ժողովրդին գուրս բերել անառնական վիճակից և ազատ միջոց առ նրան զարգացնելու իր բոլոր լաւ յատկութիւնները ու ձիրքերը : Այո, դա ամենարդարացի գործն է, որի համար մարդկութեան հարազատ և անձնէր զաւակները երազել են, կուսել են, տառապել և զոհվել են : Իսկ այսօր, Ռուսական թարն է անուս այդ առաջարկը : Իսկապէս մեծ յառաջդիմութիւն մարդկութեան համար :

Այսօր, անշուշտ մարդկային կեանքի շատ բարդ հանգամանքներն են թարի այդ մարդասէր առաջարկութեան գրգռել պատճառները :

Մեր համեստ կարծիքով թարի այդ քայլը հիմնված է զլիսաութեան գերմանական վիճակը և Առաքելական թրանս-Եօսէֆ կայսրների վաղօրօք համաձայնութեան կամ աւելի ճիշտը այդպէս տրամադրել իննելու վրա . և ահա թէ ինչու ենք այդպէս կարծուս :

Սօցիալիստական շարժումը ահազին ծաւալ է ստացել գերմանիայում . սօցիալիստները գործում են մեծ աջողութեամբ և եռանդով . նրանք մտել են ժողովրդի բոլոր խաւերի մէջ, նոյն իսկ զինուորականութեան՝ որը խիստ կարգապահութեան տակ մարդկելով՝ ամենից դժուար կերպով է ենթարկվում ընդերվարական ուսման ազդեցութեան : Սօցիալիստները այսօր ահազին ուստ են կազմում թէ Գերմանական ժողովրդի, թէ զօրքի մէջ և թէ պարլամենտում . նրանք սպասում են վիճակի կայսեբութեան և թէ այսպէս շարունակվի, շուտով կայսեբութիւնը կը կործանվի և կստեղծվի գերմանական հասարակապետութիւն, որը աւելի զօրեղ, աւելի ազգու և աւելի աւիպարական կը լինի քան ֆրանսիականը :

Վիճակը սեսնում է այդ ահառնի վտանգը . ոչ ուս է ինչզգել, բոյց ժամանակ և հնար չունի . վախնում է անհանգիստ ֆրանսիայի վրէժից, զրա համար էլ ստիպված է իր բոլոր ուստերը և միտքը կեղբոնացնել զինուորականութեան վրա՝ որ միշտ պատրաստ լինի արտաքին աւելի զօրեղ թշնամուն զիմադրելու : Բերեմն աւելի լաւ է գոնէ առժամանակ ազատել արտաքին թշնամուց, ներքին թշնամուն խնդրել և լայսբութեան հիմքը ամրացնել :

Աստրիան բոլորովին կազմալուծվում է . սօցիալիզմը, գերմանացիները, չեխերը, մաճարները, սլաւոնական փոքրիկ ազգերը իրանց յանդուգն պահանջներով և կուսներով թունաւորում են ծերունի կայսեր վերջին օրերը, ուզում են կործանել հարսբուրգի կայսրութիւնը : Իսկ թրանց Եօսիֆի կառավարութիւնը ստիպված է շարունակ սղառալինել արտաքին թըշնամու յանկարծակի յարձակմանը զիմազրելու, զրա համար էլ ժամանակ և ոյժ չունի կարող միջոցներով ճնշելու ներքին զժոհ տարբերին : Եւ չէ ցանկանում սեսնել իր կայսրութեան բաժա-

նումը . ուստի շատ սիրով կը համաձայնէր զէնքը վաչր ղենչև և ժամանակ վատակէր ներքին թշնամիները ճնշելու համար :

Իտալիայի վիճակը արդէն բացայայտ է . այս տարվայ ժողովրդական շարժումները ապացոյց էին որ Իտալիան էլ հասարակապետական ձգտումներ ունի . . .

Ահա թէ ինչու երբեք զաշնակցութիւնը կը ցանկանար գոնէ մի առժամանակ վախ չունենալ արտաքին թշնամիներէ :

Ռուսաց թարը սիրով համաձայն կը լինէր վերեւ յիշած երեք պետութիւնների պետերի գաղտնի միտումներին հրապարակային արձագանքը դառնալ, որովհետեւ թէ այդ պետութիւնները շարունակ սպառազինվեն, նրանց զժոհ հպատակները աւելի կը շատանան ու կը զօրանան և մի գեղեցիկ օր աւելի ու վրա կանն իրանց ներկայ ըժէմները ու կստեղծեն մի ամբողջ հանրապետական Եւրոպա, որից աւիպարական իրէջանքը աւելի ուստով ներս կը սողան միապետական ռուսական սահմաններից և վտանգի կենթարկեն Ռուսական միապետական ըժէմը . . .

Մանաւանդ ուսը այնքան է առաջ անցել իր արտաքին քաղաքականութեան մէջ, որ շարժում է ևնդլիոյ և ուրիշների նախանձը ու գագուս իրան զէմ և միշտ կարող է կորստաբեր կուս բռնվել : Մի կողմից էլ իր ընդարձակ պետութեան մէջ զըժգոհների թիւը շատ ստուար է :

Մնում են թրանսիան և Անդլիան : Մենք չենք կարծում որ թրանսիան մոռանայ Ալքասառէնը և զէնքը վաչր ղենչև :

Իսկ Անդլիան երբէք չի համաձայնի, որովհետեւ նա լաւ հասկանում է և տեսնում թէ ինչպէս Գերմանիոյ, մանաւանդ Ռուսաստանի և Աւստրիոյ ներքին կեանքը լիքն է պետական կազմակերպութիւններից զժոհ տարբերով և կառավարութիւնները ստիպված են կուսել թէ՛ նրանց հետ և թէ՛ պատրաստվել արտաքին թշնամուն զիմադրելու համար . ինքը արդէն մեծաքանակ

զօրք չունի, ամենից էլ հարուստ է և միշտ ու աւելի զիւրութեամբ կարող է նաւատորմը զօրեղացնել : Նրա միակ ցանկութիւնն է որ իր հակառակորդ պետութիւնների սրտում թէ արտաքին թշնամու ստակալի վախը լինի և թէ ներքին թշնամիներն : Մի խօսքով իր հակառակորդները կաղզուրվելու ժամանակ չունենան և իրեն համար ապագայում աւելի վտանգաւոր չը լինեն :

Բացի սրանից կան Բալկանեան և արեւելեան փոքրիկ, բայց իրանց արդարացի պահանջների համար միշտ կուսելու պատրաստ, ընդհանուր հրդեհին շարունակ նիւթ աւող ազգերը, որոնք նախքան զինադադար անել և ներքին կեանքը բարելաւելը, պէտք է իրանց հայրենիքի տէրը գառնան :

Թարի առաջարկութեան իրագործումը հրաշալի հետեւանքներ կունենան միայն այն դէպքում, եթէ մեծ պետութիւնները նախ բաւականութիւն տան ճընշված փոքրիկ ազգերի արդարացի պահանջներին, ապա բուն նպատակ զինն իրանց հպատակներին բոլորովին ազատ օրէնքներ տալ և անկեղծ կերպով զօրավիզ լինել նրանց խաղաղ մտաւոր և բարոյական զարգացման :

Ահա սրան չենք հաւատում, գոնէ առ այժմ :

Այնու ամենայնիւ թարի առաջարկը պարզ ապացոյց է, որ մարդկութեան բոլորքող մասի ջանքերը այնքան էլ ապարդիւն չեն անցել և միապետներն անզամ տրամադրութիւն են ցոյց տալիս ճնշւած ժողովրդներին շոյսելու :

ՎԱՐԳՈ

ՁԵԿՈՅՑ

Տ. Շաւարշ (Ե.) ամսոյս 13էն ի վեր հրատարած ըլլալով խմբագրութեան անգամակցութեան, նոյն թուականէն սկսեալ «Շարժում»-ի հետ ու է կապ ունենալէ զազրած է :

—)(—

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

ՌՈՒԾՈՒՔԻ ԺՈՂՈՎԸ

Այսօր Ռուսները և Պուլկարիոյ հայ բողոքական պատուելիները, Ռուսները մէջ հաւաքական նիստ մը կը գումարեն, խորհրդակցելու համար այն միջոցներուն վրայ, որոնք կրնան իրական օգուտ մը բերել հայ ժողովրդին:

Ժողովին գաղափարը ինքնին ապացոյց մըն է թէ պատուելիները իրենք եւս զգացած են թէ գաղթականութեան այս երկու տարիներուն մէջ «գրական» օգնութիւն մը չեն կրցած ընել, և, բոլորովին անտարբեր հանդիսականի դեր չկատարելու համար հանդէպ թշուառութեան այն հեղեղին որ իրենց աչքերուն առջեւ կը սահէր, հոն, հոս, գրամական օգնութիւններ կամ լաւ եւս ողորմութիւններ ըրած են, որոնք, աւելորդ է ըսել, շատ անզամ, մուրացկանութեան և ծուլութեան, քաջալիբրանքներ եղած են միայն:

Թողով անցեալը, գանք ներկային, որ շատ աւելի հանգարտ, և նուազ խճողուած պէս պէս կարօտութիւններով տառապող տարերէն, աւելի որոշ կացութիւն մը կը ներկայացնէ անոնց որ օգտակար ըլլալ կը տենչան:

Չենք տարակուսիր թէ ժողովը գործի մկսելէ առաջ, պիտի փութայ պարսաւանքի խոշոր բուէ մը տալ բոլոր այն օտարանպատկառներուն, որոնք մարդասիրութեան պատրուակին տակ այնքան

արցունք թափել տուին մեր որբ և այրիներուն, իբր թէ արդէն բաւական լացած չըլլային անոնք... և անոնց, որ կրօնքի որսորդներու տխուր գերը կատարելով, մէկ ձեռքով շերտ մը հաց կարկառեցին, և միւսով խլելու աշխատեցան խեղճ հայուն սրտէն այն հատաքը և այն աւանդութիւնները, որոնք իր գոյութեան ամենէն նուրբ շրջերուն հետ շաղախուած են:

Մեր համարումը պատուելիներուն վրայ, պահ մը իսկ թոյլ չտար են թափուելու թէ կրօնական նկատումները ու է կաշկանդիչ դեր կատարեն ժողովին որոշումներուն վրայ: Ինչպէս մեր, նոյնպէս անոնց անկեղծ տենչն է հայ ժողովուրդին բարիքը. և այս տենչանքը միութեան նոր կապ մը չէ՞ մեր մէջ, որ նոյն հայրենիքի վաւակներ, նոյն նախահայրերու թոռներ ենք, ըլլանք բողոքական, կաթոլիկ և կամ մայրենի. և կեղեցիկին պատկանողներ:

Ուրեմն, նա մանաւանդ ժողովին հրապարակային հանգամանքը աչքի առաջ ունենալով, կարելի է ենթադրել թէ բողոքական պատուելիները, փոխանակ առանձին և կղզիացած գործունէութիւն մը պարզելու, պիտի յարմարագոյն նկատեն զէթ ասկէց ետքը ամէն մէկ քաղաքի ազգ. մարմիններու հետ գործակցելու, զօրացնելով զանոնք իրենց գաղափարներով, աշխատութիւնով և քիչ մըն ալ այն գրամով զոր օտար մարդասիրութենէ հայթայթելու համար, մաս-

նաւոր գիւրութիւններ ունին: Այս համեմաշի գործակցութիւնը միայն իրական օգուտներ կրնայ բերել ժողովուրդին, և պատուելիներուն ձեռնարկները, սրբանոց, արհեստանոց, թէ զպրօց, փրկել այն անկայուն և միօրեայ հանգամանքէն զոր ներկայացուցին մինչեւ այսօր: Որքան աւելի, եթէ պատուելիները, ժողովուրդին մտաւոր և բարոյական բարձրացման զօրաւոր մղում մը սալէ ետքը, իրենց մասնաւոր գործունէութեան միջոցին, Աստուծոյ բանին հետ մէկտեղ, ժողովուրդին չմոռնային քարոզել նաեւ աշխատութեան հատաքը, երկրային իսէլայական կեանքի մը յանդեցնող միակ և անմիջակ հաւատքը:

Գ.Ա.ՄԵՐ-ԱՐՇԱՒԻՐ

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ԱՂՔԱՏԻՆ ՎԱՐԿԸ

Արգարեւ այսօր ազգեր եւ ժողովուրդներ նիւթական ու բարոյական բարօրութեան լուսւոր շաղկին մէջ շատ աւելի առաջ գացած պիտի ըլլային՝ եթէ իրենք իրենց համար խոչընդոտներ պատրաստած չըլլային:

Մարդկութիւնը—անշուշտ ի վեաս իր բարեկեցութեան—ժայտեր ու բրլուրներ պղծելով դուրս հանած է այլ և այլ փայլուն մետաղներ և զանոնք ձուլելով ու կողպարելով ձեւաւած է գրամը, ստեղծելու համար իր յառաջդիմութեան զէմ վտանգաւոր խոչընդոտ մը. վասն զի այդ կէտը մետաղները հետզհետէ անհասնելու քով զիջուելով, կազմած են մասնաւորին հարստութիւնը և ընդհանու-

րին ազգատու թիւնը՝ քիչելու երջանկութիւնն ու շատերու թշուառութիւնը: Իրաւ է թէ կայ կէտ մը, որ գոնէ միւթարական է: Նիւթարական այս դարու մէջ մարդու կեանքին ու բարեկեցութեան վրայ դրամին հետ գրեթէ հաւասար ուժերով կազդէ նաեւ այն փոխադարձ ընկերական վստահութիւնը, զոր անհասնելու կը սառնեն իրարու հանդէպ և զոր անուստի մարդիկ իրենց պաշտօնական լիզով կը կոչին վարի:

Առեւտրական հրապարակի վրայ, որ մարդկային ազգի ընկերական զարգացման ու նիւթական բարօրութեան մէկ կարեւորագոյն հնոցը և զած է, դրամն առանձին չէ որ սիրած է. գրեթէ նոյնքան հզօր ու ազդեցիկ գիրք ունի այնտեղ նաեւ վարկը. և արդէն վարկը սեռակ մը դրամ և գրամը սեռակ մը վարկ չէ:

Սակայն գծրախառնութեանց մեծագոյնը հոն է որ ինչպէս երկրի բոլոր նիւթական աղբիւրները՝ նոյնպէս և մարդկութեան բոլոր բարոյական բարեքները հզօրին առանձնաշնորհուն երբ դարձած են. ինչպէս գրամը նոյնպէս և վարկը հարստութիւն ստացուածք եղած և նիւթարական հոգիներու խոհեմութեան շրջանակին մէջ միայն սահմանափակուած ըլլալով մարդկութեան մէկ անաւոր մեծամասնութիւնը՝ թերեւս ինը տասնորոգը՝ նիւթասիրական անխղճութեամբ զրկուած լքուած է վարկի և վստահութեան կենսաբան հովանաւորութենէն:

Նշանաւոր գործնական անտեսագէտ մը Լուի Պլան այս անտանիկ կացութեան դարման մը ըլլալու համար, կառավարիչ հասարակաց վստահութիւնը գինի գործաւորի տրամադրութեան ներքեւ—ստեղծել աղբաքին վարկը:

Եւ սակէ աւելի նպատակայարմար լուծում մը կարելի չէր տալ խնդրին, գոնէ առ այժմ: Ազգատ աշխատաւոր մը, որ իր վայելած վարկի շնորհիւ

—Եթէ ինչորք ուշի ուշով քընենք, կը տեսնենք որ այս երկրորդ պայմանն էլ ո՛չ անհրաժեշտ է և ո՛չ էլ գոհացուցիչ: — Չէ՞ որ նոյն իսկ նորագոյն գերմանիան իրեն մէջ բովանդակում է աւելի քան երեք այլաւոր ասորիք: Կեղտ (celte), Սլաւոն տարրեր մեծ բաժին ունին գերմանական ազգի ամբողջութեան մէջ, բայց՝ չնայելով այդ հանգամանքին, գերմանական ազգութիւնը կայ եւ գոյութիւն ունի:

Եթէ համացելութիւնը սկզբունք ընդունուէր, այն ժամանակ մի տեսակէտով Ֆրանսիան բաժան—բաժան պիտի լինէր, իսկ մի ուրիշ տեսակէտով նա իրաւունք պիտի ունենար տէր հանդիսանալու Գալլերի բոլոր երկրներին: Գլխաւորապէս կելտ տարրէ բաղկացած այսօրուայ Ֆրանսիան՝ իբր մէջ առատութեամբ պարունակուած է Գերմանական, Իբերական և նոյն իսկ Յուն տարրեր:

Համացել—Լեւը և Ռուսը տարրեր, ոտոխ ազգութիւններ են կազմում: Միացեալ—Նահանգները, հարաւային Ամերիկայի գաղթականութիւնները համացելութեան գաղափարի մերժելովն է որ Անգլիայի և Իսպանիայի հետ մի ամբողջութիւն չկապ մնալով այսօր իբրեւ զատ ազգութիւններ իրենց յատուկ գոյութիւնը ունին:

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

(Շարունակելի)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն (3)

ԱՉԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԿՋՐՈՒՄԻ

Գերմանական թէօրիայի առաջին տարրը, ազգայնութեան սկզբունքի տեսակէտից, ո՛չ անհրաժեշտ է և ո՛չ էլ գոհացուցիչ:

Մի երկրի ընդհանրութեան պատկանելի անպատճառ չի յառաջացնել ժողովրդական միութիւն, անհատներին ամբողջութիւն, ուրեմն և մտքի ու զգացմունքների համամասնութիւն: — Ազգութեան գոյութեան համար հայրենիքի հանրական սեպհականութիւնն էլ բոլորովին անհրաժեշտ չէ:

Հայ, լեհ այսօր իրենց հայրենիքի սեպհականատէքը չեն, բայց և այնպէս կազմում են զատ ազգութիւն: — Իսկ բնական սահմանների տեսութիւնը բոլորովին խախտու հիմունք է և երբէք չի կարող անհրաժեշտ տարր նկատուել ազգի ուրոյն մարմին կազմելուն և հետեւաբար մի պայման՝ նրա անհատական գոյութեան: — Ոչ մի բան այնքան կամայական ևս վտանգաւոր չէ, որքան այն սկզբունքը, թէ մի ազգ իւր գոյութիւնը յարատեւելու համար, անպատճառ ձեռք պիտի բերէ իւր բնական երկրի սահմանները: — Ո՞ւր տեղ է սկսում բնական սահմանը և չէր վերջանում: Ի՞նչու համար մի

երկրի բնական սահման պիտի ընդունել այս ինչ գետը, կամ այս ինչ լեռը և ո՛չ թէ մերձակայ այն ինչ գետը, կամ այն ինչ լեռը, և կամ ծովը, որ աւելի հեռուն է: Ո՞վ կարող է սակ թէ ո՞ւր է մի ժողովրդի բնական սահմանը, և հետեւաբար ո՞ր կէտին հասած նա կանգ պիտի առնի:

—Մի ազգութեան գոյութեան համար աշխարհագրական միութիւնը բոլորովին անհրաժեշտ պայման չէ, որ ո՛չ մի երկրի մէջ հայրենասիրութիւնը և ազգային միութեան ոգին այնքան վառ և զօրաւոր չէ, որքան զուրկեցական ազգի մէջ, թէեւ այդ երկրի բնական սահմաններ չունին: Եթէ բնական սահմանների տեսութիւնը արգարեւ անհրաժեշտ նկատուէր, այն ժամանակ այդ ազգը իրաւունք պիտի ունենար անարգել կերպով վայր իջնել իւր արդէն գրաւած բարձրաւանդակներից և տիրէր իւր շուրջը տարածուած այն հովիտները, որոնք ոչնչով չեն անջրպատուած իւր հայրենիքէն:

Փոքրիկ Բելգիան—ինչպէս նաեւ ուրիշ շատ ազգեր—չունին բնական սահմաններ, ո՛չ Ֆրանսիայի և ո՛չ էլ Հոլլանտիայի կողմից, սակայն նա կազմում է մի զատ ազգութիւն, որ միշտ իւր միութեան նախաձեռնից, ունի իրեն ազգային սեպհական կեանքը: —

Բնական սահմանների թէօրիան բանաւոր ոչինչ չի ներկայացնում:

իրաւասութիւն պիտի ունենայ ինք
որոշել իր աշխատութեան չափն ու
արտադրութեան արժէքը, բնական է
որ բաւականութիւն պիտի ստանայ
թէ նիւթապէս եւ թէ քարոյապէս :

Աշխարհի բոլոր անասնազանգերը
վերջնականապէս համաձայնած են սա
կէտի վրայ թէ աշխարհի մէջ աւելն
աւսնորոյթիւն եւ արժեք գործաւորի
աշխատութեան արդիւնքն է . ուստի
թէ աշխատաւորն ունենալով իր
վարկը՝ ինք շահագործէ իր գործը՝
իր արտադրութիւնը, հաւատացէ՞ք
որ ոչ անօթի պիտի մնայ եւ ոչ մերկ
կուց փորով ու խաղաղ հոգեով պի-
տի աշխատի լաւագոյն արտադրել :
Եւ որ աւելին է՝ այնքան սակաւ չպի-
տի գինովնայ, որովհետեւ իր կեան-
քին վարկեւանները՝ իր քրտինքին
արդիւնքը եւ իր աշխատութեան
զինք ուրիշներէ չպիտի գրաւուին :
Այլեւ իր կ'ինն ու գաւակները լա-
պիկ եւ քաղցած չընջելով, անօթու-
թիւնը ու թշուառութիւնը ընդհուպ
պիտի հեռանան իր ընտանեկան յար-
կէն :

Եւ յետոյ, փորը կուշտ ու կ'ոնակը
տաք աշխատաւորը լաւ տրամադրու-
թիւն եւ ազատ միջոց պիտի ունե-
նայ խորհիլ նաեւ իր մտաւոր ու
բարոյական պէտքերու մասին : Բան
մը, որ յոյժ պիտի նպաստէ ազգերու
եւ մարդկութեան ամբողջական զար-
գացման, վասն զի այսօր միայն իր
օրասպանիկին վրայ մտածող այդ աշ-
խատաւոր դասակարգն է որ կը կազ-
մէ մարդկութեան մէկ կարեւոր մե-
ծամասնութիւնը եւ որու բոլոր բնա-
տուր ձիւքերն ու մտաւոր արժա-
նիքներն անմշակ եւ խոպան կը
մնան ի փեսա մարդկային յոռտղի-
մութեան, շնորհիւ ներկայ անտե-
սական աննպաստ եւ ճնշող պայման-
ներուն :

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիկ, 18 Օգոստոս

Ուսանողներու տուած պարահան-
դէսն գոյացած 800 ֆր. պարտքին
մէկ կարեւոր մասը կը ստականէր
գաղղիացի մը Գործը այն սասի-
ճան ձգձգուեցաւ որ քիչ մնաց խայ-
տառակութեան պիտի յանգէր :

Ուսանողներու մէկ մասը միանա-
լով, ջնջուած Միութիւններին նորէն
հաստատեցին, նոր Գործ. ժողով մը
որոշեցին եւ, ուսանողութեան պա-
տիւր փրկելու եւ ամօթալի դատա-
վարութեան մը առաջը առնելու
համար, պարտաւորով հետ կարգա-
դրութեան մը յանգեցան : Մագիստր
որ նորընտիր զիւանին պաշտօնավա-
րութիւնը աւելի արդիւնաւոր եւ
քեւական ըլլայ, ինչ որ շատերու հա-
մար անյուսալի է :

Պ. Մանուէլեան երբեք չգաղղի
աշխատելէ եւ արդիւնքներ ցուցնելէ :
Այս անգամ ալ նոր ընթացքը գտած
է Չղային գրութեան վրայ, եւ Պ.
Մագիստր Տիւվալ, իր վերջին դատա-
խօսութիւններէն մէկուն մէջ նորէն
գնահատած է իր երկտասարդ աշխա-
տակցին անժխտելի արժանիքը : Սոս-
պօնի հոշակաւոր բրոքէօններէն Պ.
Պիւնէի խնդրանքին վրայ, Պ. Մա-
նուէլեան իր նոր գիւտին զձագրու-

թիւնները յանձնած է իրեն, եւ բո-
ֆէսօրը իր նոր երկին մէջ մասնա-
ւոր յօդուած մը նուիրած է այդ
խնդրին, ինչ որ մեծ պատիւ մըն
է : Մանուէլեանի, եւ նոր սրա-
խոթեան մը շալժառիթ իր բազմա-
թիւ համակրողներուն :

Երեկ, սոսանայ հարուստ նա-
թատէր Մեծ. Ալա Մանթաշեանց,
ընտանեօք եկեղեցի գալով, արար-
զութեանց աւարտութիւն հաքք փա-
փաք յայտնեց տեսակցիլ Հոգաբար-
ձուութեան հետ եւ 1000 ֆր. նուիրեց
մատրան շինութեան համար, խոս-
տանալով կարեւոր գումար մըն ալ
նուիրել էլը շինութիւնները սկսին :
Պ. Մանթաշեանց 200 ֆր. ալ Բարե-
գործական Ընկերութեան նուիրելէ
հաքք մեկնեցաւ, թեւ թեւի մտած
Պ. Չերազի հետ, որուն հետ շատ սի-
րալիր կերպով կը տեսնուէր :

Յ.Տ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իրաւունքի 59 թիւին մէջ «Ձրոյց-
ներէ Զգուշանալ» խորագրով յօդ-
ուած մը հրատարակուած էր, զգու-
շացնելու համար մամուլը՝ ո եւ է
ւտուգութեան կարօտ լուր հրապա-
րակ նետելէ :
Այդ գրուածքի մէջ որչափ ալ ան-
տեղի ակնարկներ կային՝ մենք ծա-
փեցինք դադափառը, «Ձրոյցներէ
Զգուշանալ», վասն զի արդէն իսկ
լրագրութեան մէջ ընդունուած օ-
րէնք մըն էր այն :

Սակայն գարմանալին այն է որ
Իրաւունքի 63 թիւին մէջ ստուգու-
թեան կարօտ զրոյց մը կարգալու-
զժարատութիւնն ունեցանք :

Յօդուածագիր մը իր խօսքը «կըռ-
ւողներուն» ուղղելով կը հոշակէր թէ
«չուսկացիներու կրթասիրական համ-
բաւը նսեմացած է. թաղական, հո-
գարարձու, ժողով, ժողովուրդ սկսած
են զիրար չհասկնալ եւ պատրաս-
տուած՝ խաղաղ Շուսկան բարեւոյն
մը դարձնելու» : Եւ ճոռմարան յօդ-
ուածագիրը իր մէկ «ակնարկը» բա-
կը համարէր «կուռող, սրդիսպան»
չուսկացիները «վերջին պահուն կե-
ցընելու. գանալվժին բերանը... Ի-
րենց իսկ ձեռքով իրենց գաւակները
մորթելով առաջ (։.։) :

Բայց արդէն նոյն թիւի թիւին 64
թիւին մէջ արուած հերքումէ մը
յայտնուեցաւ թէ Շուսկանի մէջ այդ
տեսակ անազնիւ կուռողներ չկան,
եւ եթէ նոյն լսի գտնուէին մի քա-
նիներ, այդ չէր նշանակէր թէ ամ-
բողջ Շուսկանի հայերը «կուռողներ»
են : Շուսկացիք կը շարունակեն վա-
յելիլ իրենց «կրթասիրական համ-
բաւը» : Յօդուածագիրը կրնայ հան-
զիտա ըլլալ եւ հրաժարիլ այլեւս
անձնական հաշիւներու վրայ ձեւուած
լուրեր տարածելէ :

Եթէ Շուսկանի վարժարաններու
համար դասատու վարձելու խնդիրը
երկարեցաւ, ատոր պատճառը առաջին
անգամ ընտրուած դասատուներն
էին, որոնք ինչ ինչ նկատումներով
իրենց պատուոյ խօսքը յարգելու
չափ քաջութիւն չունեցան :

Մենք կը հաւատանք թէ յօդուա-
ծագիրն այս տեսակ գրապարտութիւն
մը յերիւրեկուր դադափարին հեղի-
նակը չէ, այլ միայն հլու գործիքը,
ինչ որ աւելի գէշ է :

Բայց թե՛րթը—եթէ Զէյթունէն
լուր մը առլը՝ Յիւլիպէն թղթակ-
ցութիւն մը հրատարակելու չափ
զիւրին չէր՝ Շուսկանէն լուր տալը
աւելի՞ զժուար էր : Ամբողջ Շուսկա-

ցիւնները գրչի մէկ հարուստով ան-
ուանարկելէ առաջ շատ դժուար բան
էր ստոյգ տեղեկութիւններ քաղել :
Կունէ այս անգամ լուրը Ասիոյ հեռա-
ւոր անկիւնէ մը՝ կղզիացած Զէյ-
թունէ մը չէր հասնէր, այլ այնպիսի
քաղաքէ մը որու հետ առ առաւելն
Ձէ ժամուան մէջ կարելի էր թղթակ-
ցիլ : չէ՞ որ պէտք էր «Ձրոյցներէ
զգուշանալ» :

Տ. ԱՃԷՄԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

—(—

Պաթումէն կը գրեն թէ ռուս
կառավարութիւնը գրաւեց մին-
չեւ անգամ Դելիլանի մօտերը
գտնուած Պօղոս Գիլիսէ կոչուած
գիւղին գաղթողը զոր գիւղացի-
ները կառուցած էին 10ական կու-
պէկ վճարելով եւ քար ու հող
կրելով : Գիւղին բնակիչները
արտասուքով շատ ազնուոր են
որ գէթ դպրոցը չգոցեն, բայց
ի դ՛ուր : Զարական հրամանը ա-
նողք էր :

Պուրկալի թաղ. Խորհուրդը
պաշտօնական նամակով մը կի-
մացնէ մեզ թէ «Որբերու նպաս-
ւամատոյց յանձնաժողով» մը
գոյութիւնը անձանթ է իրեն եւ
թէ՛ այդ մասին անհատական կամ
պաշտօնական ո եւ է դիմում չէ ե-
լած իրեն :

Անտէր որբ եւ որբուհիներու
այդ «պաշտօնականները» ինչո՞ւ
այդքան մուծին մէջ մնալ կը
սիրեն :

Կարսի կողմերը ապաստա-
նած կարներցի գաղթականները
սկսած են հայրենիք վերագառ-
նալ :

Վանայ Դումինիկեանները
կ'ըր Դարի մէջ ձեռք բերուած
յաջողութենէն քաջալերուած՝
Մոկաի հայերուն 60 ոսկի տալ ա-
ռաջարկեց են այն պայմանով որ
ամենքը մէկէն Հոսկանի կեղե-
ցիլին յարին : Մոկացիկ խոխտա-
բար մեքծեր են բաթէրաներու
այս ամօթալի առաջարկը :

Վանեցիներու պատուիրա-
կութիւն մը կարօտեալներու եւ
կրօնափոխութեան խնդրոյն առ-
թիւ Պատրիարքին ներկայանա-
լով, ցաւ յայտներ է որ Վանայ
նման կարեւոր Վիճակի մը հա-
մար միջնեւ հիմա կարող եկեղե-
ցական մը առաջնորդ չէ կար-
գուած :

Խարբերգի ամերիկեան մի-
սիոնարները իրենց Գասապայի
մէջ բացած որբանոցին սաները
Խարբերգ փոխադրեց են, որով-
հետեւ... միսիոնարները յոյ-
սերնին կտրեց են Գիլիէն, որուն
հողը անպատու կը գտնեն բողո-
քականութեան համար : Նոր ա-
պացոյց մը չէ՞ այս, կըսէ Բիւ-
զանդիսն, թէ միսիոնարք մար-
դասիրութիւնը գիւմակ մը ըրած
են իրենց բուն նպատակին :

Սուլթանին գահակալութեան
ուարեղարձին օրը Օրմանեան
Պատրիարքը Համիտին ներկայա-

նալով, ինքիւր գլխուն հայ ժողո-
վրդին շնորհաւորութիւնները եւ
շնորհակալութիւնները մատու-
ցեց է :

Այս տարեդարձին առթիւ, Պու-
սոյ այն թաղերուն մէջ ուր այս
կամ այն էֆէնտին ազգ. գործե-
րու կը խառնուի, պնակալիդա-
կան ցոյցեր եղեր են : Բարթու-
զիմէոս, Աշըբեան եւ Մեսրոպ է-
ֆէնտինները իրենց տուները շքե-
ղապէս լուսազարդեց են :

Թուրքիոյ ներկայ ըէժիմին
գէմ տարրերն ալ բարկացած են :
Տարի չանցնին որ ողողում, երկ-
րաշարժ, համաճարակ, հրդեհ
չյարձակին այդ երկրին վրայ :
Վերջին ազեմն է Պէօյիւք-Տէրէի
հրդեհը որ անցեալ չորեքշաբթի
դիշեր 400ի մօտ տուներ մոխիրի
վերածած է :

Սուլթանը հրամայեց է Դրան
որ հայոց Հիւանդանոցին օրական
51 օխա միւր 150ի, եւ 340 օխա
հացը 600 օխաի բարձրացուց-
ուի :

Աւելորդ զոհողութիւն որմէ
տաճիկները կրնային զերծ մնալ,
իրենց բարի սովորութեան հա-
մեմատ «անգրին» զրկելով նաեւ
Հիւանդանոցին հազարէ աւելի
պատասպարեալները :

Պուսոյ կրօն. ժողովը ընդար-
ձակ գրաբար նամակ մը զրկած
է կաթողիկոսին, եւ ամուսնական
կարգ մը խնդիրներու մասին
բացատրութիւններ տալով, խնդ-
րած է որ վերջ մը տայ բոլոր
կարգի դիմումներուն : Այս նա-
մակը հոգեւորական քարասրտու-
թեան մէկ շօշափելի ապացոյցը
չէ՞ :

Անցեալ չորեքշաբթի, Բե-
րայի մէջ, Պօն-Մարշէի մթերա-
նոցէն հրդեհի սկզբնաւորութիւն
մը ծագելով, մեծ իրարանցում
մը առաջ եկեր է . եւ այն լուրին
վրայ թէ հայերը ուսմը պայթե-
ցուցեր են, բոլոր խանութպան-
ները անհաբեկած՝ իրենց խանութ-
ները գոցելու շտապեց են :

«Մշակ» կը գրէ թէ Թիֆ-
լիսի մէջ՝ միայն 13 տուն գաղ-
թականներ մնացեր են, որոնց
վիճակը վերջին ծայր խղճալի
է : Ահագին քաղաք կարող չը՞
պիտի ըլլայ 54 թշուառներու
կեանքը քիչ մը աւելի հանդուր-
ժելի դարձնել :

Կովկասի այլ եւ այլ տեղերէ
գաղթականներ Պաթում կը գի-
մեն այն սեղէն ճանապարհա-
ծախք մը հայթայթելու յուսով :
Դժբախտաբար Բարեգործական
Ընկերութիւնը այդ օգնութիւնը
ընելու միջոցէն զուրկ է եւ դի-
մողները յուսախար կը մնան :

Սիւլիստէէն գայթակղելի
լուր մը կը հասնի մեզ : Տեղւոյն
հրաժարեցուցուած ուսուցիչը
յոյժ անբարոյական արարքի մը
հետեւանքով քաղաքէն արտաք-
սուեր է ստաիկական հսկողու-
թեամբ : Իր մեղսակցուհին երեց

կին մը, որուն ընկերական գիրքէն աւելի զգաստութիւն կարելի էր սպասել, խնդրեր է որ զինքն ալ զըզեն այն տեղը ուր կը գըտնուի իր տարիածուն :

—Յայտնի է թէ յառաջիկայ սեպտ. 23 և 24ին կլասկովի մէջ հայասէր կարեւոր միթինկ մը տեղի պիտի ունենայ ձէյմա Պրայսի նախագահութեամբ և երեւելի անձերու մասնակցութիւնով : Լ'Ամէնի այս լուրը հրատարակելով կը խնդրէ ատենաբաններէն որ չափազանց յարձակումներ չընեն Սուլթանին վրայ, շարք մը ջարդերու տեղի չտալու համար : Իւրիչ բան է, կըսէ նոյն թերթը, եթէ միթինկին երկրորդ օրը, Լորա Սալլպուրի յանձնառու ըլլալ կ. Պոլիսը ուժեղացնել, և ստիպել Ռուսիան որ հայկական դաւաճները խնդրէ գրաւել :

—Ժընէվէն «Լ'Ամէնի»-ի կը գրեն թէ Տիրան պէյ Տատեան տակաւին նոյն քաղաքին մէջն է և Իրօշակեաններու հետ կը բանակցի : Ժէօն Թիւրքերը Բարիզ մեկնած են, ուր թուրք զեւսանները հարկ եղած գումարները պիտի յանձնէ անոնց, Պոլիս վերադառնալու և կամ լուծելու պահելու համար Եւրոպայի մէջ : Ահա թրքական թոյլ նկարագրեր թէ Ահմէտ Բիշա գեռ կանգուն կը մնայ, պատճառը այն է որ բոլորովին թուրք չէ, իր մայրը ազատասէր և կը թուած գերմանուհի մը ըլլալով :

—Յառաջիկայ գարնան Լոնտոնայի մէջ տեղի պիտի ունենայ մեծ միթինկ մը ուր Ահմէտ Բիշա պիտի խօսի Սուլթանական բռնակալութեան դէմ :

—Օր. Ամի Արգար, Կալիթաի մէջ հրատարակած է ստուար հատոր մը որ կը պարունակէ հայկական եկեղեցւոյ եղանակները եւրոպական գրութեամբ ձայնագրուած :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՁԷՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ

Այս հրաշալիքը արդարեւ միշտ օրուան խնդիրը կը մնայ :

Աշխարհի մամուլը այդ խնդրով լեցուած է. և բոլոր թերթերը կը մրցին որքան հնար է պերճախօս բառեր գտնել իրենց հիացումը յայտնելու այդ մարդասիրական գաղափարին : Ասկէջ զատ, մեծ և փոքր կառավարութիւնները եւս, ընդ որս և Անգլիա, պաշտօնապէս իրենց հաւանութիւնը և համակրանքը հաղորդած են Ձարական առաջարկին, և սակայն աւելի վերապահում ցոյց կուտան քան մամուլը :

Համոզումները բարձրովին տարբեր են սակայն գրամական և գործերու հրապարակին վրայ : Այդ կողմը մինչեւ անգամ կարծողներ կան թէ Պ. Մուրավիէվի

յայտարարութեան տակը խաղ մը կայ, որ բոլորովին հակառակ է անոր արտաքին իտէալական երեւոյթին : Երեւոտական հաշիւը խնդրոյն բուն շարժառիթը ըլլալ կը կարծուի : Այս միջավայրին մէջ կը պնդեն թէ Ռուսիան մեծ գումարներու պէտք ունի իր չինական ձեռնարկները և մանաւանդ Մանչուրիոյ երկաթուղին ի գլուխ հանելու : Արգ, որքան ատեն որ Արեւելքի մէջ քաղաքական գրութիւնը այսքան սպառնալից մնայ, Ռուսիոյ անհնարին պիտի ըլլայ Բարիզի կամ Պերլինի մէջ պէտք եղած վարկերը գոհալ :

Տ Ր Է Յ Ֆ Ի Ի Ս

Օրուան երկրորդ և ոչ նուազ պղծկալից խնդիրը կը մնայ դարձեալ Ստանի կղզիին արտուկանին գործը, որ վերջին օրերս նոր երեւոյթներով հրապարակելու մտցնելով Ամբրիկան, Սպանիան և ատոնց պատերազմը որ անշուշտ վր շահեկանութիւնը կորսնցուցած է :

Մեծ հաւանականութիւն կայ որ Տրէյֆիւսի դատը վերաքննուի : Արգէն Ջոյաի գլղղիչ դատէն և Ժօրէսի անշուղակի յօգուածներէն ետքը, ամենէն կատարի հակառէյֆիւսականներուն իսկ համոզումը խաղաղած էր նախկին հարիւրապետին յանձնարարութեան վրայ, երբ վերջերս կեղծարարութեան գործ մը երեւան ելաւ բոլորովին նպաստաւոր արտականին :

Արգարեւ, անցեալ յուլիս 7ին, պատերազմական նախարար Պ. Գալանեաք, երեսօրիսանական ժողովին առջեւ Պ. Գալանեաքի հարցապնդումին առթիւ, յայտարարած էր թէ Տրէյֆիւսի յանցապարտութիւնը շուրջ վերջըններ և թէ ինք նամակ մը ունի ձեռքը, որուն մէջ ոճրագործին անունը ամբողջութեամբը յիշուած է :

Իէլիէօ, Կոնս և սպայակոյտի պետ Պատէֆր զօրավարները համամիտ էին նախարարին և միայն Բիքար գնդապետը հակառակած էր թէ այդ և թէ նախորդ նամակներուն վաւերականութեան և յատկապէս գրած էր վարչապետին թէ ինք կարող է այդ գրութիւններուն կեղծ ըլլալը հաստատել :

Արգ գրիպուածը երեւան հանց թէ այն նամակը որուն վրայ կը թիւնած այնքան սիրուն բանախօսութիւններ ըրած էին կառավարութեանէն սկսեալ բոլոր հակառէյֆիւսականները, կեղծ էր. և ինչ որ յոռեգոյն է, կեղծարարը եղած է նոյն իսկ տեղեկութեանց գլխաւոր պետ զընդապետ Հանրին : Այս յայտնութիւնը մեծ գայթակղութիւն առաջ բերած է : Ոմանք՝ մտային իւանդարման մը արգիւնը կը նկատեն այս ամօթալի կեղծա-

րարութիւնը, բայց եղբու թիւնը սա է թէ Հանրի գնդապետը ամէն բան խոստովանելէ ետքը, բանտին մէջ անձնասպան եղած է, ամէլիով իր կողորդը կարելով :

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Սպանիոյ նախարարական խորհուրդը խորհրդարանական ծրագիրը քննեց և զաղափար յայտնեց թէ վիճարանութիւնները կարելի եղածին չափ շուտ փութացնել հարկաւոր է : Կառավարութիւնը արգէն վերջնականապէս ընտրած է իր պատգամաւորները Բարիզի հաշտութեան համաժողովին համար : Ամբրիկեան արգէն նշանակուած հինգ պատուիրակներէն չափ Բարիզ պիտի երթայ նաեւ Մէրիթ զօրավարը, իւր խորհրդական, ամբրիկեան յանձնաժողովը լուսաբանելու համար Թիւրքիստաններու գրութեան վրայ, զորս ամբողջապէս Մ. Նահանգներուն կցելու կուսակից է Մէրիթ զօրավար : Կըսուի թէ ապտամբապետ Ակինալտօ եւս, երկու պատուիրակներ պիտի զրկէ Բարիզ, ապտամբական կուսակցութիւնը ներկայացնելու :

Մանիլի մէջ կացութիւնը միշտ ձգտուած կը մնայ ամերիկացիներու և ապտամբներու մէջ, և կռիւները անպակաս են :

Իսկ Քուպայի մէջ երկու տարբերուն յարաբերութիւնները կը սկսին տակաւ մեղմանալ, և շատ մը ապտամբապետներ ժողովուրդը կարգապահութիւն հրահարող յայտարարութիւններ կը հանեն :

ԻՆՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Կրէտէն գրաւող չորս պետութիւնները խիստ հրամաններ տուած են իրենց հրամանատարներուն, որպէս զի բնաւ թոյլ չաւան թուրք զինուորներու մուտքը կղզիին մէջ, և բոլոր ուժով գիմադրեն այս օրինակ ո և է փորձի դէմ :

Տասանորդի տուրքէն գոյացած գումարը սեպտ. 3ին պիտի յանձնուի միջազգային իշխանութեան :

—Հոլանտաի գահաժառանգ Վիլհելմինա թագուհին չափահասութեան տարիքը թեւակոխած ըլլալով, կառավարութեան ղեկը ձեռք առաւ. և սիրուն յայտարարութիւն մը ուղղելով ժողովուրդին, յայտնեց թէ հոլանտական անուան և դրօշին պատիւը յարգել պիտի տայ : Դեռ անտի թագուհին թագադրութիւնը սեպտեմբերի մէջ տեղի պիտի ունենայ մեծաշուք հանդէսներով :

—Մոսկուաի հանդէսները աւարտած ըլլալով, Ռուսիոյ կայսերական զերդատանը Սէվաստաբօլ զարձաւ :
—)(—

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ Ի ՎԱՌՅԱ

Կընդունուին թոշակաւոր աղջիկներ եւ փոքր մանչեր որք. Օր. Լ. Ամիրխանեանցի վարչութեան ներքեւ, կուսանին հայերէն, եւրոպական լեզուներ եւ գաշնակ : Վարժարանը կը բացուի առաջիկայ սեպտեմբեր 1ին :

Երիտասարդ և քաջառուց Պօստեցի հայ կին մը կը փափաքի տուները ծառայել իբր կ Ա Ս Ե Տ Ո Ւ հասցէն Դ. թաղ թիւ 1154, Թ. ասոր Բանայթօֆի տունը :

ՊՕՐՍԱ

Վառնա 26 Օգոստոս
ՊՈՒՂՏԱՑ
Վալօն, լիպրա 55—58, հէքթօր. 8—10.9 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօր. 8—11 ֆրանք

ԱՐԲԱ ԵՆԷՒ
Լիպրա 42—50 հէքթօր. 4.60—5.20 ֆրանք

ԵՈՒԼԱՅ
Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տիր. 3.60—4 ֆրանք

ՏԱՐԸ
Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵԱ
Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր 100 օգոգաք 16—23 ֆր. մալա կեօրէ : Առապա մուսմէլէսի նարօլէն 21 ֆրանք ի հասար իլէ տիր.

Կիւնտէ 8—10 վալօն, 300—350 արապա պուղտայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր : Մըսրը ևօգ տըր :

ՎԱՐՇՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ)
—)(—
) Գին 1 ֆրանք)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժուի խմորագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալխանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով : Մօտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին ճիշտութեան գոհեբը :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻԼԵԱՆ
—)(—
ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԵՏՈՑ
—)(—
Գին 1 ֆրանք

Կը վաճառուի Շարժուի խմորագրատունը :

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Կուզէք վաճառուան լաւ պաշտօնեայ մը. զիմեցէք Շարժուի խմորագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինք տարիէ իվեր կառավարական պաշտօն կը վարէ եւ սոմարակալութեան ճիւղին համար Վառնայի առեւտրական գրասենեկէն վկայուած է :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Ս »
Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թահիթ կեօղիպէօյի քանակներ խանութը, և Ապարտարան մզկիթին գէմը հայկական գրատունը, Ա. Ջարրահանէլեանի քով :

Почаггггга «Взаимность» Варна.